ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2024թ. հոկտեմբերի 1-ին, N 468 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 302-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով՝ որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 2-ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 222-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին N 302-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
1) Հավելվածի 4-րդ գլխի 27-րդ կետի 2-րդ ենթակետում «տարածքային կառավարման մարմինը» բառերը փոխարինել «ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը» բառերով,
2) Հավելվածի 5-րդ գլխի 103-րդ կետում հանել «կառավարման նոր համակարգի անցած դպրոցների դեպքում՝» բառերը:
2. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել սույն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

01.10.2024

X

VERIFIED OCSP 01.10.2024 14:37:04 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ